

8898



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«12» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 158 - 24

Նախաձեռնող՝

«Կայուն Ջարգացման Ներդրումային Հիմնադրամ»
ք. Երևան, Մյասիկյան պ. 5/1

Գործունեությունը՝

Գոշ բնակավայրի վարչական փարածքում խմելու ջրագծերի
հիմնանորոգման և ջրաչափիչ սարքերի փեղադրման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեկշիռություն
Տավուշի մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԲՓ № 158 - 24

«42» օգոստոսի 2024թ.

Գոշ բնակավայրի վարչական տարածքում խմելու ջրագծերի հիմնանորոգման և ջրաչափիչ սարքերի տեղադրման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Կայուն Զարգացման Ներդրումային Հիմնադրամ»
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /այսուհետ՝ ՇՄԱԳ/ համաձայն՝ նախատեսվում է իրականացնել Գոշ բնակավայրի խմելու ջրագծերի հիմնանորոգման և ջրաչափերի տեղադրման աշխատանքներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել Դիլիջան համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հուլիսի 7-ին տրված N ԱՀ-05 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/: Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության կողմից՝ սուբվենցիոն ծրագրով: Ծրագրի իրականացումը կապահովի ջրամատակարարման պայմանների բարելավում:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի վարչական տարածքում, մարզկենտրոն Իջևանից 28կմ հարավ-արևմուտք, Աղստև գետի ձախափնյակում: Նախատեսվող ուղեգիծն անցնում է բլրավետ ռելիեֆով՝ ծովի մակարդակից 1550 մ բարձրության վրա: Գործունեության իրականացման համար օգտագործվելու են Դիլիջանի համայնքային և «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հողերը, գոյություն ունեցող ասֆալտապատ և գրունտային ճանապարհները:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի գրունտային ջրերն ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 15մ-ից ավելի խորը հորիզոններում: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 47 սմ:

Տարածքի հիմնական ջրային զարկերակը Աղստև գետն է իր վտակներով: Տարածաշրջանի բուսականության գերիշխող տիպն անտառային է: Գործունեության տարածքում Կարմիր գրքում գրանցված տեսականեր չեն հայտնաբերվել, տարածքը չի առնչվում պատմամշակութային և բնության հուշարձանների հետ:



Նախատեսվող գործունեության աշխատանքները ներառում են.

- արտաքին ցանցի կառուցում՝ 14047 մ երկարությամբ,
- ներքին ցանցի կառուցում՝ 915 մ երկարությամբ,
- ներտնային միացումներ՝ 205 հատ /Φ20մմ/,
- ՕԿՋ-ի վերակառուցում 3 հատ,
- ՕԿՋ-ների ցանկապատում,
- ջրաչափական դիտահորերի կառուցում՝ 29 հատ:

Ընդհանուր ջրագծից 4550 մ երկարությամբ հատվածն անցնելու է «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿի /այսուհետ՝ ԱՊ/ տարածքով: «Դիլիջան» ԱՊ-ի տարածքում շինարարական աշխատանքներն իրականացվելու են հատուկ սկզբունքներով՝ բացառելով ծանր տեխնիկայի շարժը հողային և բուսական ծածկույթի վրա, հատկապես որտեղ կիրճ կա, աշխատանքներն իրականացվելու են ձեռքով: ԱՊ-ի տարածքում հեռացվող բուսահողի ծավալը կազմում է 950 խմ բուսահող: Բուսահողի պահպանման և հետագա օգտագործման համար անհրաժեշտ միջոցառումները իրականացվելու է համաձայն՝ ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N 1404-Ն որոշման, հետագայում կօգտագործվի տարածքի վերականգնման նպատակով:

Ջրագծի ուղեգիծն 9600 մ երկարությամբ անցկացվելու է գոյություն ունեցող ճանապարհների երկարությամբ՝ նախկին ջրամատակարարման համակարգի կառուցապատված, ասֆալտապատ տարածքներով, որտեղ բուսահողը բացակայում է:

Նախագծով նախատեսվում է հին, վնասված խողովակները փոխարինել 50 մմ-ից մինչև 160 մմ տրամագծով պողպատե և պոլիէթիլենե խողովակներով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում օգտագործվելու են՝ ավտոինքնաթափ, ավտոամբարձիչ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր, ավտոբետոնախառնիչ և այլն: Շինարարական նյութերից օգտագործվելու են՝ բետոնային խառնուրդ, ամրաններ, ջրամեկուսիչ նյութեր, եռակցման էլեկտրոդներ և այլն: Շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շինաշխատանքների անընդհատությունը:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավեցման, շինանձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ջրցանի համար նախատեսված ջուրը բերվելու է ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու համար ջուրը բերվելու է տարրաններով:

Շինարարության տևողությունը կկազմի 6 ամիս, այդ ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է՝ ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (25 մարդ), ինչը կազմում է 107.64 մ³: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմաններն ապահովվելու են շարժական բիոզուգարաններով: Բիոզուգարանների տեղադրումն ու սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու քանդման, փորման, հողային, եռակցման աշխատանքների, շինարարական տեխնիկայի և մեխանիզմների **շահագործման**



ընթացքում, վառելիքի թերայրման արդյունքում առաջացող արտանետումների և աղմուկի հետ:

Նախագծով նախատեսված ջրամատակարարման խողովակաշարն ամբողջությամբ ստորգետնյա տեղադրմամբ է լինելու, օգտագործվելու են նախկին ջրագծերի խրամուղիները, խրամուղիների քանդման ընդհանուր մակերեսը՝ 9400 մ² է: Քանդման արդյունքում առաջանալու է գրունտի հանույթ՝ 17566.5 մ³, որից 4786.5 մ³ օգտագործվելու է հետլիցքի, իսկ 1278 մ³ մնացորդային գրունտը կտեղափոխվի Դիլիջան համայնքի կողմից հատկացված Գոշ բնակավայրից 7 կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Կենցաղային աղբի կուտակման համար շինհրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով:

Շինարարության ընթացքում առաջացող ասֆալտբետոնյա ծածկույթի, բանեցված շարժիչի յուղերի, կապարե կուտակիչների թափոնները և օգտագործված անվադողերը հավաքվելու են թափոնների համար հատկացված վայրում և տրվելու են թափոնների վերամշակմամբ զբաղվող լիցենզավորված ընկերություններին:

Շինարարության ավարտից հետո նախատեսվում է խախտված տարածքների վերականգնում՝ խախտված տարածքները բերելով սկզբնական վիճակի:

ՇՄԱԳ-ի համաձայն՝ շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք ներառված են մոնիթորինգի պլանում: Մասնավորապես՝ «Դիլիջան» ԱՊ-ի տարածքում.

- մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ՝ ամիսն երկու անգամ,
- շրջակա տարածքների հողային ծածկույթի մոնիթորինգ՝ ամիսը մեկ անգամ,
- կենսաբազմազանության մոնիթորինգ՝ շինժամանակահատվածում մեկ անգամ,
- տեխնիկական միջոցների աշխատանքային վիճակի մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ,
- աղմուկի և թրթռումների մակարդակի չափումներ,

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է ներդնել 250000 ՀՀ դրամ:

Պարճառաքանական մաս. Փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքի Գոշ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Դիլիջանի համայնքապետարանը: ՇՄԱԳ-ը լրամշակվել է հաշվի առնելով ներկայացված առաջարկությունները և դիտողությունները:

Հանրային քննարկման ընթացքում բնակավայրի վարչական ղեկավարը նշեց, որ գոյություն ունեցող ջրագիծը կպահպանվի և կվերանորոգվի հետագայում ոռոգման նպատակով օգտագործելու համար:

Գոշ բնակավայրում ջրամատակարարման համակարգի բարելավումը կնպաստի ջրային ռեսուրսների կորստի վերացմանը, կստեղծվեն ժամանակավոր աշխատատեղեր՝ տեղի բնակիչներին ներգրավելով շինարարական աշխատանքներում:

Վերլուծելով տնտեսական և սոցիալական դրական ազդեցությունները, ինչպես նաև ջրագծի անցկացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր նվազագույն բացասական ազդեցությունները և ժամանակավոր բնույթը, վերը նշված



նախատեսվող գործունեության իրականացումը համարվում է նպատակահարմար՝ սոցիալական տեսանկյունից:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է.
- Խստորեն հետևել գործունեությանն առնչվող՝ շրջակա միջավայրի պահպանության, քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների, աշխատանքի անվտանգության և այլ իրավական ակտերի պահանջներին:
 - Հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
 - Բացառել «Դիլիջան» ԱՊ-ի տարածքում ծառահատումները և մեքենաների կայանումը, ինչպես նաև գործունեության տարածքում թափոնների կուտակումները, թափոնների բաց այրումը:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Գոչ բնակավայրի վարչական տարածքում խմելու ջրագծերի հիմնանորոգման և ջրաչափիչ սարքերի տեղադրման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գ. Մեզրյան

Ռուզան Մակինյան